ՀԿԴ/0116/02/22
ՇԴ1/2938/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 հունվարի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ՀԿԴ/0116/02/22 (ՇԴ1/2938/02/21) քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի հունվարի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2021 թվականի դեկտեմբերի 20-ին հայցադիմում է ներկայացրել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

4. 2022 թվականի դեկտեմբերի 30-ին թիվ ՇԴ1/2938/02/21 քաղաքացիական գործը ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, որին շնորհվել է ՀԿԴ/0116/02/22 համարը:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի հունվարի 3-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունվարի 4-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին, 41-րդ հոդվածին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասին, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) հակակոռուպցիոն դատարանը ձևավորելու և գործունեությունը սկսվելու պահից հետո վերջինիս քննությանը ենթակա են հետևյալ գործերը.*

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված վարույթները,

2) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերը,

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը:

(...) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, հանդիսանալով պետական իրավասու մարմին, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, սույն հայցը ներկայացրել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այն ժամանակ, երբ դեռևս չի գործել ՀՀ հակակոռուպցիոն դատարանը:

Այսինքն՝ Դատարանը փաստում է, որ դատախազությունը պետության շահերի պաշտպանության հայցերով դիմում է դատարան միայն այն դեպքում, երբ պետական իրավասու մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, հայց չի ներկայացրել դատարան:

(...) Դատարանը գտնում է, որ Հայցվորի կողմից քաղաքացիական դատավարության կարգով ներկայացվել է պետության գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայց, (...) հետևաբար Դատարանը գտնում է, որ թիվ ՇԴ1/2938/02/21 քաղաքացիական գործը պետք է ըստ ենթակայության հանձնել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին»[1]*:*

7. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին և 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և նույն հոդվածի 2-րդ մասին՝ Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հունվարի 3-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(...) Դատարանն արձանագրում է, որ պետական մարմինների կողմից պետության շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու՝ վերոնշյալ հոդվածով նախատեսված հնարավորությունը ավելի նեղ բնույթ ունի, քանի որ ներառում է բացառապես տվյալ մարմնի լիազորության շրջանակներում և տվյալ մարմնի իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով ներկայացված հայցերի հիման*

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1, թերթեր 111-112:

վրա հարուցված քաղաքացիական գործերը: Յուրաքանչյուր պետական մարմին, դատարան հայց հարուցելով, թեպետ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը, այդուհանդերձ, նպատակ է հետապնդում պաշտպանելու այդ կառույցի շահերը և ոչ թե հավաքական պետության շահը: Ինչ վերաբերում է դատախազությանը, ապա վերջինիս՝ հայց հարուցելու լիազորությունը սահմանափակված է բացառապես պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությամբ, ընդ որում բացառիկ դեպքերում, որպիսիք սահմանված են «Դատախազության մասին» օրենքով: Սրանով շեշտադրվում է, որ Դատախազությունը չի ներկայացնում այս կամ այն նախարարության կամ այլ պետական մարմնի «նեղ» շահը, այլ ներկայացնում է հավաքական պետության շահը: Եվ հենց այս բացառիկ լիազորությունների իրականացման համատեքստում ստեղծվել է հակակոռուպցիոն դատարանը:

(...) [Պ]ետության գույքային կամ ոչ գույքային շահերին առնչվող քաղաքացիական գործը ենթակա է քննության հակակոռուպցիոն դատարանում՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում.

1. առկա է պետության գույքային կամ ոչ գույքային շահի պաշտպանության հայց,

2. հայցը հարուցվել է պատշաճ սուբյեկտի՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

Ուստի բոլոր այն դեպքերում, երբ որևէ պետական մարմնի կողմից դատարան է ներկայացվում հայցադիմում, այն թեև այս կամ այն չափով առնչվում է պետական շահերին, այնուամենայնիվ, պետական մարմնի կողմից ներկայացված հայցը առաջին հերթին միտված է տվյալ մարմնի շահերի պաշտպանությանը, ունի բացառապես քաղաքացիաիրավական բնույթ, հետևաբար այդ հայցերի հիման վրա հարուցված քաղաքացիաիրավական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Միևնույն ժամանակ Հակակոռուպցիոն դատարանի՝ որպես մասնագիտացված դատարանի ենթակայությանը վերապահված պետության շահերի վերաբերյալ գործերի շրջանակը օրենսդիրը սահմանել է սպառիչ կերպով՝ այդ շրջանակում ներառելով բացառապես ուղղակիորեն պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակով ներկայացված հայցերի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերը, որպիսի լիազորությունը, վերապահված է ՀՀ գլխավոր դատախազությանը:

(…) Դատարանն արձանագրում է, որ թեև փվյալ դեպքում պաշտպանության նախարարությունը հայցը ներկայացրել է իր լիազորությունների շրջանակնում պետության շահի պաշտպանության նպատակով, այդուհանդերձ այն իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական վեճ, չի պարունակում այնպիսի փարրեր, որոնք պետք է քննվեն մասնագիտացված՝ Հակակոռուպցիոն դատարանի կողմից, ուստի այն ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

(…) Ելնելով վերոշարադրյալից՝ Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ թիվ ՀԿԴ/0116/02/22 գործը ենթակա չէ քննության Հակակոռուպցիոն դատարանում»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0116/02/22 (ՇԴ1/2938/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ (…) հակակոռուպցիոն դատարանը»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:*

10. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերն են՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ

[2] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 2, թերթեր 3-13:

գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Նշվածը հիմք է տալիս փաստելու, որ օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանի ենթակայությանն է վերապահել ոչ թե այն գործերը, որոնք **առնչվում են պետության գույքային և ոչ գույքային շահերին**, այլ այն հայցերով գործերը, որոնք **ուղղված են այդ շահերի պաշտպանությանը:** Այսինքն՝ հակակոռուպցիոն դատարանի ենթակայական իրավազորությունը սահմանափակված է **պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի** քննությամբ: Հարկ է նաև նշել, որ այս մոտեցումը բխում է 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներից, համաձայն որոնց, օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանին օժտել է մասնագիտացված դատարանի կարգավիճակով և ըստ այդմ՝ նախատեսել այդ դատարանի քննությանը ենթակա քաղաքացիաիրավական վեճերի սահմանափակ շրջանակ[3]:

Բացի այդ, նույն օրենքի հիմնավորումներից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թվակազմը սահմանելիս (5 դատավոր), հիմք են ընդունվել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների և դատախազների կողմից դատարաններ ներկայացված՝ պետական շահերի պաշտպանության հայցերի վերաբերյալ վիճակագրական տվյալները: Նշվածը հիմք է տալիս հետևություն անելու, որ օրենսդրի նպատակն է եղել **հակակոռուպցիոն դատարանի ենթակայությանը վերապահել պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի քննությունը, որոնք ներկայացվել են ՀՀ դատախազության կողմից**[4]:

11. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

---

[3] Տե՛ս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի հիմնավորումները՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf

[4] Տե՛ս նույն տեղում:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայց ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի[5], որը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[6],

- հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին, 41-րդ հոդվածին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասին, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից քաղաքացիական դատավարության կարգով ներկայացվել է պետության գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայց, ուստի այդ հայցի քննությունը ենթակա է հակակոռուպցիոն դատարանին[7],

- հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և նույն հոդվածի 2-րդ մասին՝ Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հունվարի 3-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ պետության գույքային կամ ոչ գույքային շահերին առնչվող քաղաքացիական գործը ենթակա է քննության հակակոռուպցիոն դատարանում՝ հետևյալ պայմանների

---

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

միաժամանակյա առկայության պարագայում. ա) առկա է պետության գույքային կամ ոչ գույքային շահի պաշտպանության հայց, բ) հայցը հարուցվել է պատշաճ սուբյեկտի՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից, ուստի, բոլոր այն դեպքերում, երբ որևէ պետական մարմնի կողմից դատարան է ներկայացվում հայցադիմում, այն թեև այս կամ այն չափով առնչվում է պետական շահերին, այնուամենայնիվ, պետական մարմնի կողմից ներկայացված հայցը առաջին հերթին միտված է տվյալ մարմնի շահերի պաշտպանությանը, ունի բացառապես քաղաքացիաիրավական բնույթ, հետևաբար այդ հայցերի հիման վրա հարուցված քաղաքացիաիրավական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է, որ թեև տվյալ դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հայցը ներկայացրել է իր լիազորությունների շրջանակում՝ պետության շահի պաշտպանության նպատակով, այդուհանդերձ, գործով վեճը քաղաքացիաիրավական է, չի պարունակում այնպիսի տարրեր, որոնց առկայության ուժով այն կարող է համարվել հակակոռուպցիոն գործ և քննվել Հակակոռուպցիոն դատարանի կողմից, հետևաբար, թիվ ՀԿԴ/0116/02/22 գործը ենթակա չէ քննության հակակոռուպցիոն դատարանում[8]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, ընդ որում՝ այն ներկայացվել է ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջով: Այսինքն՝ հայցադիմումի առարկան է կազմում գումարի բռնագանձման պահանջը, որը թեև կարող է նաև առնչվել պետության գույքային և ոչ գույքային շահերին, սակայն ուղղակիորեն միտված չէ այդ շահերի պաշտպանությանը: Այլ կերպ, հայցադիմումի առարկան չի հետապնդում հանրային այնպիսի շահի պաշտպանության նպատակ, որն օրենսդրի կողմից նախատեսվել է որպես ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից գործերի քննության նախապայման:

13. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0116/02/22 (ՇԴ1/2938/02/22) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընդդեմ Գոռ և

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

14. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0116/02/22 (ՇԴ1/2938/02/22) քաղաքացիական գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՀԿԴ/0116/02/22 (ՇԴ1/2938/02/22) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընդդեմ Գոռ և Արմեն Խեչոյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ